ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ամպային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-25/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«24» դեկտեմբերի 2025թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ,

Սամվել Ավագյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Նիստից բացակայում էր Սեդրակ Սարդարյանը՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

1. **Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-25/10» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (22.12.2025թ.)՝ ժամը 15:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 23.12.2025թ.՝ ժամը 15:00-ին:

2. **Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնման գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և գնման հայտով սահմանված է ծառայությունների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գին՝

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ ծառայությունների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	Ամպային ծառայություններ	26 400 000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ	Երևան, Ազատության 24/1

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-25/10» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	-
1	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ	22 000 000	20%	26 400 000	22 000 000	20%	26 400 000	-

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է, աճուրդն ամփոփվել է 23.12.2025թ.՝ ժամը 15:30-ին, և Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից է համարվել «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ հրավեր) պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

7.1. «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Ընդ որում, «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերությունը հայտի ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, և հայտով ներկայացված է բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտի գնահատման արդյունքների մասին.

8.1. «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը՝ Հավելված N 1-ը, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ը և հայտի ապահովումը կազմված են Հրավերի պահանջներին համապատասխան, հետևաբար «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Տեղեկատվություն՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

9.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերությանը:

Ընթացակարգին հայտ ներկայացրած այլ մասնակիցներ չկան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, Հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
նախագահ՝ _____ Խորեն Պետրոսյան

Անդամներ՝

_____ Արթուր Թամրազյան

_____ Սամվել Ավագյան

Քարտուղար՝ _____ Մարիամ Հայրապետյան